



MILLENNIUM
CHALLENGE CORPORATION
UNITED STATES OF AMERICA

**MILLENNIUM CHALLENGE
ACCOUNT - ARMENIA**



Չուրն ավելի թանկ արժեք քան չնշակվող հողը

Այսպես են մտածում Արարատի մարզի Գինեվետ համայնքի ղեկավարն ու բնակիչները: Գինեվետ համայնքն Արարատի մարզի այն 3 համայնքներից մեկն է, որոնք հանդիսանում են Այգեգարդի ինքնահոս համակարգի շահառու համայնքներ:

Դրական վերաբերմունք վերաբնակեցման նկատմամբ. Խորհրդային պետությանը պատկանող հողերի սեփականաշնորհումից 20 տարի անց մոտ 400 հեկտար հող դեռևս չի մշակվում այն տարածքում, որտեղ կառուցվելու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի կողմից ֆինանսավորվող Այգեգարդի ինքնահոս համակարգը: Իսկ թե ինչու՝ շատ պարզ է. Արարատյան դաշտվայրի այս բերրի հողերը չեն մշակվում, քանի որ չկա ոռոգման ջուր: Եվ հավանաբար սա է պատճառը, որ Գինեվետ համայնքի բնակիչ Սառա Ալիշանյանի խոսքերով ինքն ընդհանրապես դեմ չէր իր 315 քառակուսի մետր հողակտորի օտարմանը: Սառան լիահույս է, որ շուտով ինքը կկարողանա ծիրանի այգիներ հիմնել իր 5000 քառակուսի մետր սեփականաշնորհված հողի վրա, որը նախկինում երբեք չի մշակվել: Հողի օտարման դիմաց Սառան մոտ 400 ԱՄՆ դոլար է ստացել և ավելի քան արդարացի է համարում, որ փոխհատուցումը հիմնվել է շուկայական արժեքի վրա, որին ավելացվել է նաև դրա 15 %-ը: Ստացած գումարը նա օգտագործել է իր հյուրասենյակի համար երկար սպասված գորգը գնելու նպատակով, բայց իր մյուս համագյուղացիների հետ միասին կարող է նաև օգտվել այն փոխհատուցումից, որ Հայաստանի Կառավարությունը վճարել է Գինեվետ համայնքին մոտ՝ 1.5644 հեկտար համայնքային սեփականություն հանդիսացող հողի դիմաց: Գինեվետի գյուղապետ Միսակ Սանթրյանը հպարտությամբ նշում է, որ ստացած 7000 ԱՄՆ դոլարը ծախսվելու է համայնքային ներտնտեսային ցանցի վերականգնման համար ՀՄՀ-Հայաստան ծրագրով պահանջվող 15 % համաֆինանսավորումն ապահովելու համար:

Գործընթացը հեշտ էր գյուղացիների համար, բայց ոչ պաշտոնյաների. Երբ գյուղացիներին հարցնում էինք, թե արդյոք հողի գնահատման, սեփականության իրավունքի փոխանցման կամ պայմանագրերի գրանցման գործընթացները իրենց որևէ անհանգստություն են պատճառել կամ դժվար են ընթացել, նրանց դեմքի արտահայտությունից արդեն իսկ պարզ էր դառնում, որ նույնիսկ չգիտեին թե խոսքն ինչի մասին է: Իրականում, նրանք չէին էլ գիտակցում, թե ինչ հսկայածավալ աշխատանք է կատարվել



նախքան այն պահը, երբ իրենք հրավիրվել են նուտարի գրասենյակ պայմանագրերը ստորագրելու: Միանգամայն այլ էր գյուղապետի կամ մարզպետարանի ներկայացուցիչ Արտավազ օրդոյանի պատասխանը նույն հարցին: Արարատի մարզպետարանին էր հանձնարված ՀՄՀ-Հայաստանի կողմից իրականացվող և ՀՀ Կառավարության կողմից ֆինանսավորվող Վերաբնակեցման գործողությունների պլանների /ՎԳՊ/ աշխատանքների համակարգումը: Վերջին չորս ամսվա ընթացքում մարզպետարանի աշխատակիցները գյուղապետարանների իրենց գործընկերների և ՀՄՀ-Հայաստանի հետ համատեղ բանակցություններ են վարել ծրագրի ազդեցությունն իրենց վրա կրող քաղաքացիների հետ, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Կադաստրի Պետական կոմիտեից ստացել են համապատասխան պարզաբանումներ հողի սեփականությանն առնչվող հարցերի շուրջ, իսկ ՀՀ ֆինանսների նախարարության Պետական գանձապետարանի հետ էլ համագործակցել են, որպեսզի փոխհատուցման բոլոր գումարները ժամանակին փոխանցվեն: Բայց մենք այս մարդկանցից ոչ մի բոլոր չսեցինք: Նրանց համար ամենակարևորն այն է, որ մեկ-երկու տարուց ջուրը կհոսի այդ համակարգով, իսկ նրանց վճռականությունն այնքան հաստատուն է, որ օգնում է հաղթահարել վարչարարական բոլոր խնդիրները կամ էլ համբերատար գյուղացիներին բացատրել, թե ինչու է իրենց հողը օտարվում և որն է դրա օգուտը:



Հաջողության գրավականները. Վերաբնակեցման գործընթացի հաջողությունը շատ տարբեր կողմեր ունի. առաջին անգամ Հայաստանում իրականացվել է Համաշխարհային բանկի/ՀՄԿ-ի ստանդարտներին համապատասխան վերաբնակեցում, ՀՀ Կառավարությունը միջոցներ է հատկացրել ՎԳՊ-երի իրականացմանը և արել ամեն հնարավորը, որ աշխատանքներն արդյունավետ համակարգվեն բոլոր մակարդակներում, իսկ արդյունքում չի հետաձգվել 4 ինքնահոս համակարգերի շինարարության պայմանագրի կնքումը: Եվ վերջում հավելենք, որ գործընթացն այնպես է ընթացել, որ փաստաթղթային և բյուրոկրատական բոլոր խնդիրները առավելագույնս պարզեցվել են, իսկ հասարակ մարդիկ այս ամբողջ ընթացքում չեն էլ նկատել, թե բոլոր հարցերն ինչպես են լուծվել: